

ՀԻՊՈՊՈՆԻԿԱՆ ԵՎ ԱՊԱԳԱ ՖԵՐՄԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ՉՆ "Ագրոգիտասփյուռ" ծեռնարկություն

Հողի սեփականաշնորհման պայմաններում հիդրոպոնիկայի ինստիտուտի կուրակած հսկայական փորձը գյուղատնտեսության մեջ ներդնելու համար անհրաժեշտ է մշակել նոր մեխանիզմներ:

Եթե մինչ այդ գոյություն ունեցող համակարգը ի վիճակի էր մեծածավալ հիդրոպոնիկումներ կառուցել և դրանով իրագործել գյուղատնտեսական մթերքների արդյունաբերական արտադրություն, ապա դա այսօր անիրագործելի է: Միևնույն ժամանակ անթուլյափրելի է, որ տասնամյակների ընթացքում կուրակված փորձն ու նվաճումները մնան ց'պահանջ:

Ելքը, մեր կարծիքով, նոր պայմաններում նոր մոտեցման ցուցաբերումն է: Հիդրոպոնիկան, որպես բույսերի արտադրության նոր ուղղություն, իր իմաստավորումն ունեցավ հատկապես արժեքավոր ու փոքրատոննաժ մշակաբույսերի կենսափոխնուլոգիայի մշակումով: Որպեսզի վաղվա ֆերմերը կարողանա հիդրոպոնիկայի առավելություններից օգտվել և բերք ստանալ ավանդական երկրագործության համար ոչ պիտանի հողատարածքներից, նախ և առաջ անհրաժեշտ է, որ նա վերանայի իր մշակած բույսերի տեսականին (ավանդական լուլիկի ու պղպեղի հետ միասին նա կարող է աճեցնել կիտրոնային սորգո կամ կարվախոփ, եթե դրանց պահանջը կա շուկայում):

Հիդրոպոնիկայի վարձագումը Հայաստանում պատասխանեց մի շարք շարժարևոր հարցերի, այդ թվում նաև, թե որոնք են առավել "հիդրոպոնիկական" մշակաբույսերը: Այդ ցանկում շարժարևոր տեղ են գրավում դեղաբույսերը: Լինելով խիստ արժեքավոր, ունենալով ներքին և արտաքին շուկայում մշտական պահանջարկ, դրանք կարող են շարժարևոր եկամտաբեր լինել ֆերմերական տնտեսությունների համար, և արմատավորվելով գյուղատնտեսական տարածքներում, կփրկեն բնության մեջ հանդիպող համապատասխան բուսական ռեսուրսները:

1996թ. ընթացքում "Ագրոգիտասփյուռի" և ԳԱԱ Հիդրոպոնիկայի ինստիտուտի կողմից փորձ արվեց տարածել Արարատի մարզի Արտաշատի շրջանում առյուծագին և կարվալեզուն՝ ավանդական գյուղատնտեսական մշակաբույսերի կարգավիճակով: Մի քանի ֆերմերական տնտեսություններ ստացան բարձր բերք (սերմ), որն ունի մեծ պահանջարկ: 1997թ. ստացված բերքն արդեն, բացի տարածումից, նաև կմթերվի:

V.Ts.Haikazyan

HYDROPONICS AND FUTURE FARMING

Summary

Perspectives of hydroponics application in farms of Armenian Republic, especially on the areas that are not fit for the traditional agriculture, are presented in the paper. In such farms traditional plants are replaced by valuable medicinal plants.